

2000 2000

2000 2000  
2000 2000

825

S-90

82 LP  
S-90

ՄԱՐԿ ՏՎԵՆ

30 MAY 2011

ԿՅ

# ՄԳԻՏԱԿ ՓՂԻ ՀԱՓԵՏԱԿՈՒԹՄԸ

Թարգմ. ԶԱՎԱԽՆՑԻ

9190



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ  
ՅԵՐԵՎԱՆ — 1936

24 JUL 2013

1130



3296  
41

Մարկ Տվենը յերեխաների համար յերբեք չի գրել, բայց բոլոր յերեխաները Մարկ Տվենին համարում են իրենց գրողը: Բոլոր յերեխաները կարդացել են «Թոմ Սոյերի արկածները», և՛ «Հեկկլբերի Ֆիննը», և՛ «Յանսկին Արտուր թագավորի պալատում»:

Մարկ Տվենը զանազան շատ զրբեր է գրել: Այդ զրբերում Մարկ Տվենը պատմում է զրպրոցական ու անտուն յերեխաների մասին, գավառական չինովիկների ու նեգրերի, քաղաքի բնակիչների ու ֆերմերների, թափառաշրջիկների ու խուզարկու վոստիկանների մասին:

Մարկ Տվենը անհանգիստ ու բազմազան կյանք է ունեցել: Նա շատ է ճանապարհորդել ու հանդիպել ամեն դասակարգի ու ամեն պարպունքի շատ մարդկանց:

Մարկ Տվենը ծնվել է 1835 թվին վոչ հարուստ առևտրականի ընտանիքում: Մանկու-

թյունն անց ե կացրել հարավ-ամերիկյան մի փոքրիկ քաղաքում, Միսսիսիպի գետի ափին: Հոր մահվանից հետո, տասներկու տարեկան Տվենն ստիպված եր թողնել դպրոցն ու տպարանում գրաշար դառնալ: Աշխատանք գրտնելու համար Մարկ Տվենը քաղաքից-քաղաք թափառեց և իր արհեստի շնորհիվ մեծ ճանապարհորդություններ կատարեց: Նա յեղավ Ամերիկայի գանազան քաղաքներում: Աշխատում եր տպարաններում: Շատ ու քիչ փող վաստակելով, նա շարունակում եր իր ճանապարհը: Այսպիսով նա հասավ մինչև Նյու-Յորք: Տասնյոթ տարեկան Տվենը վերադարձավ իր հայրենի քաղաքն ու թողեց տպագրական աշխատանքը: Տվենը դարձավ առևտրական նավի նավաստի:

1869 թվին Սան Ֆրանցիսկոյում մի մեծ լրագրի հրատարակիչ առաջարկեց Տվենին ճանապարհորդել Միջերկրական ծովով: Մարկ Տվենն այդ ճանապարհորդության մասին մի գիրք գրեց: Այն որվանից նա դարձավ հայտնի գրող: Ամեն մի նոր գրքի հետ ավելանում եր նրա հոչակը: Նրա գրքերը թարգմանվեցին յեվրոպական բոլոր լեզուներով:

Բայց խաղաղ կյանքը դուր չեղ գալիս Մարկ Տվենին, Ծերության որերին նա գուրս յեկավ

նորից ճանապարհորդելու Ամերիկայում: Ամերիկայի շատ քաղաքներում նա հրատարակային յեյուլթնեք ունեցավ իր պատմվածքներով ու դասախոսություններով: Մարկ Տվենն սքանչելի պատմող եր: Ամեն տեղ նրա պատմվածքները հիացմունք ու ծիծաղ եյին առաջ բերում:

Բայց Մարկ Տվենի պատմվածքները միայն ծիծաղ չե, փոր առաջ են բերում: Նրանք յերբեմն ստիպում են լուրջ մտածել այն բանի մասին, ինչի վրա ծիծաղում ե գրողը:

Ի՞նչպես գրեց Մարկ Տվենն «Սպիտակ փղի հափշտակումը» — իր պատմվածքը խուզարկու վոստիկանների մասին:

1891 թվին տաղանդավոր գրող Կոնան-Դոյլը հրատարակեց իր «Շերլոկ Հոլմսի արկածները» վերնագրով գիրքը: Գրքի հերոս հրոչակավոր խուզարկու Շերլոկ Հոլմսն արտասովոր ճարպիկությամբ մերկացնում ե գանազան հանցանքների ու կորուստների գաղտնիքը: Իհարկե, իրականում վոչ մի խուզարկու վոստիկան այդքան հերոսություններ չի կատարել: Կոնան Դոյլի գիրքը մեծ հաջողություն ունեցավ: Բայց Կոնան Դոյլի գրքից հետո, մեկը մյուսի յետևից հայտնվեցին խուզարկու վոստիկանների մասին գրված վեպեր ու պատմը-

վածքներ: Անշնորք, սրամտությունից զուրկ հեղինակները, իրար նախանձելով թխում եյին այդ վեպերն ու պատմվածքները: Հնարում եյին մի շարք անհավատալի, անմիտ ու խորհրդավոր արկածներ: Գովաբանում եյին հերոս խուզարկուների խելքը, համարձակությունն ու անշահասիրությունը: Այդ գրքերը դուր յեկան ամերիկական բուրժուազիայի ճաշակին: Վսղ Ամերիկան տարվեց գրքերի ընթերցանությամբ: Բոլորը հիանում եյին հերոս-խուզարկուների՝ տիրոզ դասակարգի ու «սեփականության իրավունքի» այդ պաշտպանների քաջագործություններով:

Տվենը գրողներից առաջինն էր, վոր համարձակվեց ցույց տալ ամերիկական հասարակությանն իր սիրասուն-խուզարկուների իսկական դեմքը: Այս նպատակով նա գրեց «Սպիտակ փղի հափշտակումը» պատմվածքը:

«Սպիտակ փղի հափշտակումը» պատմվածքի բոլոր գործող անձինք բուրժուական հասարակության նույն սիրելի հերոսներն են, բայց միայն սրամիտ, համարձակ ու «ազնվաբարտ» խուզարկուների ու վոստիկանների փոխարեն, դրանք հիմար պարծենկոտներ են, սրիկաններ ու ավագակներ:

Տվենը ծաղրում է այդ «խուզարկուական» գրականությունը: Որինակ՝ Հոնան Դոյլի Շե-յ լոկ Հոլմսը աչքի յե ընկնում իր անհողողող սառնասրտությամբ ու ամենավճռական բուպեներին անգամ հանգիստ ծխում է իր ծխամորճը: Տվենի խուզարկուների տեսուչ Բլենտի սառնասրտությունը հասնում է հիմարության: «Յես պատմեցի խուզարկուների տեսչին փղի կորստյան պատմությունը: Նա ամենին չգարմացավ: Կարելի յեր կարծել, թե յես գանգատվում եմ նրան ինչ վոր մի ձեռնասուն շնիկի կորուստի մասին»:

Հոնան Դոյլն ամեն կերպ աշխատում է հետաքրքրել ընթերցողին: Սկզբում նա շփոթեցնում է ընթերցողին սխալ ու կեղծ յենթադրություններով, այնպես վոր հետո իսկական ու ճիշտ յեզրակացությունը թվում է միանգամայն անսպասելի: Սպանում ու գողանում է միշտ նա, վորի մասին սկզբում ընթերցողի մտքով անգամ չեր անցնում կասկածել: Կորած իրը Հոնան Դոյլի հանցավորները պահում են այնպիսի տեղ, վոր դարձյալ վոչ վոքի մտքով չի անցնի, որինակ՝ հենց իր տիրոջ սենյակում և այլն:

Տվենի խուզարկուներն իրենք են խճճում

գործը, և խճճում են այնպես հիմարաբար, վար  
չի կարելի նրանց վրա չծիծաղել: Կորել է  
փիղը: Փիղը ծածկի տակ եր: Կողպեքներն  
իրենց տեղն են ու անվնաս, բայց փիղը կո-  
րել է: Պատի մեջ մի մեծ ձեղք են գտնում:  
Կարծես պարզ է, բանն ինչու՞ն է—փիղը քան-  
դել է պատն ու փախել: Վոչ: Խուզարկուները  
դրան չեն հավատում: Խուզարկուներն ասում  
են. «Ձեղքն արել են զիամամբ, վորպեսզի  
խուզարկուներին մուրուխթյան մեջ գցեն: Անի-  
րագեկ մարդկանց մտքովն անգամ չի անցնի  
այդպիսի բան, իհարկե, բայց նրանց՝ խու-  
զարկուներին այնքան էլ հեշտ չի մուրեցնելը»:

Հոնան Դոյլի ու նրան ընդդրինակողների խու-  
զարկուները բոլորն էլ «գուշակում են», վորով-  
հետև ուշադրություն են դարձնում մանր-մունր  
բաներին: «Նկարագրեցեք ինձ փղի արտա-  
քինը», — ասում է Տվենի խուզարկուների տե-  
սուչ Բլենտը, — «Բայց միայն խնդրում եմ  
ճշտորեն, առանց բաց թողնելու վորեւ ման-  
րամասնություն... մեր արհեստի մարդկանց հա-  
մար նշանակություն ունի ամեն մի մանրունը»:

Մարկ Տվենը ծաղրում է վոստիկանների  
ու խուզարկուների սովորական գործելակերպը:  
Տվենի պատմվածքի մեջ խուզարկուներն այն-

պես են վորոնում կորուսար, վոր կարծես կո-  
րածը վնչ թե փիղ է, այլ ինչ վոր փոքրիկ  
իր — մատանի կամ ազամանդյա քորոց: Խու-  
զարկուների տեսուչ Բլենտը մինչև իսկ հրա-  
մայում է խուզարկել յենթադրվող հափշտա-  
կիչներին, կարծես նրանք կարող էյին փիղը  
թագցնել դրպաններում:

Սակայն Տվենը վարվում է շատ նրբամիտ  
և ղգույշ:

Նա միանգամից չի ցույց տալիս, թե վոս-  
տիկաններն ու խուզարկուները պարզապես խա-  
բեբաներ ու հիմարներ են: Նա այնպես է  
պատմում, վոր սկզբում ընթերցողին կարող է  
թվալ, թե իսկապես խուզարկուները ճարպիկ,  
հանդուգն ու սրամիտ մարդիկ են: Բայց հան-  
կարծ այդ կարծեցյալ հերոսները թույլ են  
տալիս այնպիսի ակնհայտնի անմտություն,  
վոր ընթերցողն այլևս չի կարող չծիծաղել  
նրանց վրա:

Հիմարություն, ստոր խորամանկություն,  
շահամուրթյուն — կաշառակերություն ու կո-  
պիտ գովազդի տենչանք, — ահա ըստ Տվենի  
վոստիկանական կառավարման հիմնական գծերը:

Սմերիկական վոստիկանությունը պաշտ-  
պանում է տիրող դասակարգի — բուրժուազիայի

շահերը: Ամերիկական կապիտալիստները նրան փող են վճարում դրա համար: Նրանք վախենում են հեղափոխությունից: Բանվորները կարող են բռնագրավել նրանց գործարանները, ֆաբրիկներն ու հողը: Կապիտալիստները գործարաններում ու ֆաբրիկաներում պահում են հազարավոր վոստիկանական խուզարկուներ: Խուզարկուները նախագգուշացնում են տերերին գործադուլների և բանվորների ըմբոստությունների մասին: Նրանք վճարում են վոստիկանության ձեռքը բանոր հեղափոխականներին:

Տվենը բուրժուական գրող էր: Նա չէր կարող կամենալ ամերիկական բուրժուազիայի հաստատած կարգերի լիակատար կործանումը: Բայց մինչև իսկ հեղափոխությունից այդքան հեռու գրողը, ինչպիսին է Տվենը, խիստ ծաղրել է ամերիկական վոստիկանությունը և հենց դրանումն է նրա մեծ ծառայությունը:


I.

Այս պատմությունն ինձ պատմել է յերկաթուղային մի պատահական ծանոթ: Այդ մարդու պատկանելի հասակը (նա յոթանասունից անց էր), նրա մեղմ ու ազնիվ դեմքը, նրա պատմելու լուրջ ու անկեղծ տոնը, — այդ ամենն ինձ համար յերաշխիք էյին, վոր իմ լսած յուրաքանչյուր բառը զուտ ճշմարտություն է:

Սպիտակ արքայական փղերը Սիամում առանձին հարգանք ու սեր են վայելում: Այդ ամենըը զիտեն: Նրանք նվիրաբերված են թագավորին ու վոչ վոք, բացի թագավորից, իրավունք չունի տիրանալու նրանց: Նրանք թերևս թագավորից ել բարձր են, վորովհետև շրջապատված են վոչ միայն պատիվներով, այլ և անկեղծ սիրով:

Հրաշալի յե:

Հինգ տարի առաջ Միամի ու Բրիտանական կառավարութեան մեջ տեղի ունեցան ինչ վոր թեթև տարածայնություններ սահմանի վերաբերմամբ: Շուտով պարզվեց սակայն, վոր մեղավորը Միամի կառավարությունն է յեղել: Դրա համար ել նա շտապեց զիջումներ անել: Մեծ Բրիտանիայի ներկայացուցիչը հայտնեց, վոր ինքը լիապես բավարարված է ու պատրաստ է մոռացութեան տալ տեղի ունեցած տարածայնությունը: Միամի թագավորը շատ ուրախացավ: Այդ շնորհակալութեան զգացմունքից դրզված, գուցե մասամբ ել անախորժությունից մնացած հետքերը հարթելու համար, նա մտածեց Բրիտանիայի Վիկտորիա թագուհուն մի թանգարժեք նվեր ուղարկել: Արևելյան ժողովուրդների պատկերացումով—զա միակ միջոցն է թշնամուն սիրաշահելու համար: Նվերն, իհարկե, հասարակ մի բան չպիտի լիներ, այլ մեծաշուք, իսկական արքայական: Ի՞նչը կարող էր ավելի հարմար լինել թագավորական այդ նվերի համար, քան սպիտակ արքայական փիղը: Այն ժամանակ բրիտանական կառավարութեան գաղութային ծառայութեան մեջ յես բարձր պաշտոն ունեյի ու



ինձ արժանի գտան այդ նվերը տանելու թա-  
գուհուն: Մեզ համար, այսինքն՝ ինձ իմ սպա-  
սավորների հետ, փղին ել նրա սպասավորների  
հետ հատկացրին մի հատուկ նավ ու մենք  
ձանապարհ ընկանք:

Վորոշված ժամին մեծ նավը հասավ Նյու-  
Յորքի նավահանգիստը: Արքայական բեռը յես  
ժամանակավորապես տեղավորեցի մի հրաշալի  
շենքում, Ջերսի Սիտիյում: Փղի առողջական  
դրությունը հետագա ճամբորդության համար  
պահանջում էր ժամանակավոր հանգիստ:

Յերկու շաբաթ ամեն ինչ լավ էր գնում,  
իսկ հետո՝ սկսվեց: Սպիտակ փիղն անհայտա-  
ցավ: Ինձ արթնացրին կես գիշերին ու հաղոր-  
դեցին դժբախտության մասին: Սկզբում մի  
քանի ըուպե յես այնպես շփոթվեցի, վոր բա-  
ցարձակապես չգիտեյի թե ինչ անեմ: Բայց,  
յերբ խելքս գլուխս յեկավ, յես իմացա թե ինչ  
պետք է անեմ: Միայն մի յելք կար: Առանց  
լուսաբացին սպասելու, յես ուղեվորվեցի  
Նյու-Յորք ու փողոցում պատահած առաջին  
վոստիկանին խնդրեցի ցույց տալ, թե վորտեղ  
է գտնվում խուզարկու վոստիկանության  
վարչությունը: Գործս հաջող էր գնում, յես  
յեկա հենց ժամանակին: Հոչակավոր տեսուչ

Բլենար, խուզարկու վոստիկանների պետը հենց  
այդ ըուպեյին պատրաստվում էր տուն գնալու:  
Նա ընդունեց ինձ:

Բլենար միջահասակ, լայնաթիկունք ու լիքը  
մի մարդ էր: Յերբ նա մտածում էր վորեւ  
բանի մասին, սովորություն ուներ մի տեսակ  
ուներքերը կիտել ու մատներով տկտկացնել ճա-  
կատին: Նրան նայելիս ամեն մարդ կհասկա-  
նար, վոր նա հասարակ մահկանացու չէ, այլ  
մեծ շնորքներով ոժտված մի մարդ: Դիտելով  
միտար Բլենարին, յես իսկույն հանգստացա: Այդ  
մարդուն կարելի չէր վստահել այդպիսի մի  
գործ:

Յես պատմեցի տեսչին փյի կորուստի պատ-  
մությունը: Նա ամենևին չգարմացավ: Կարծես  
զանգատվում էյին մի ձեռնասուն շան կո-  
րուստի մասին: Հավանորեն այդ մարդը յեր-  
կաթի կամք ուներ ինքն իրեն զսպելու: Նա  
հանգիստ ցույց տվեց ինձ աթուն ու ասաց.

— Թույլ տվեք ինձ մի ըուպե մտածել:

Հետո նստեց իր զբոսեղանի առաջ, գլուխը  
դրեց ձեռների վրա ու խորասուզվեց մտքերի  
մեջ: Սկզբի վեց-յոթ ըուպեյին սենյակում լրս-  
վում էր միայն գրեչների ձոձոռոցը, վոր ական-  
ջիդ էր հասնում հեռու անկյունից, ուր նրա-

տած էյին գրագիրները: Տեսուչը մտքերի մեջ  
ընկրված քարացել էր կարծես: Վերջապես  
նա բարձրացրեց գլուխը: Բլենտի դեմքի վճռա-  
կան արտահայտությունը ցույց էր տալիս, վոր  
նրա ուղեղը վերջացրել է իր աշխատանքն ու  
գործողության ծրագիրը մշակված է արդեն:  
Նա սկսեց խոսել և նրա ձայնը հնչում էր հան-  
գիստ ու ազդու:

— Դա հասարակ գործ չէ, — ասաց նա: —  
Ամեն մի քայլը պետք է բազմակողմանի քննել,  
մտածել և չձեռնարկել յերկրորդը, մինչև ա-  
ռաջինը չտա հարկավոր արդյունքը: Մեր գոր-  
ծում պետք է զաղտնապահություն, խոր ու  
բացարձակ գաղտնապահություն: Ձեր կորուս-  
տի մասին չեք պատմի վուչ վոքի, մինչև իսկ  
լրաբերներին: Յես ինքս կհոգամ նրանց մասին:  
Յես կտամ նրանց միայն այնպիսի տեղեկու-  
թյուններ, վորպիսիք հենց ինձ համար հարմար  
կլինեն:

Տեսուչը գանգահարեց, Սենյակը մտավ սուր-  
հանդակ տղան:

— Ալարիկ, ասա լրաբերներին, վոր չցր-  
վեն, — կարգադրեց տեսուչը: Յես նրանց հետ  
գործ ունենմ:

Ալարիկը գնաց:

3996



— Այժմ, — ասաց տեսուչը, — անցնենք  
գործին: Յե՛վ լինենք հետևողական: Մեր գոր-  
ծում պետք է հետևողականութիւն, խստա-  
գույն հետևողականութիւն և ճիշտ մտայնում:  
Միայն այդպիսի պայմաններում մենք ձեզ հետ  
կկարողանանք վորևէ նպատակի հասնել:

Նա վերցրեց գրիչն ու մի քանի թերթ  
թուղթ:

— Յե՛վ այդպես, փղի անոնը:

— Հասան-Բեն-Ալի-Բեն-Սելիմ-Աբդուլլահ-  
Մուհամմեդ-Այհամալ - Զամսետ Չիբխոյ - Զու-  
լին Սուլթան-Բխուդպուր:

— Այդպես, մականոնը:

— Զուժբո:

— Հրաշնի: Ծննդավայրը:

— Միամի գլխավոր քաղաքը:

— Ծնողները կենդանի՞ յեն:

— Վո՛չ, սատկել են:

— Ունեցե՛լ են նրանք ուրիշ ձագեր, բացի  
սրանից:

— Վո՛չ, սա միակ տղան է նրանց:

— Հրաշնի: Փղի ընտանիքի մասին այս  
տեղեկութիւնները բավական են: Անցնենք  
հետևյալին: Նկարագրեցե՛ք ինձ փղի արտա-  
քինը, բայց միայն խնդրում եմ ճշտորեն, ա-

ռանց բաց թողնելու վորևէ մանրամասնութիւն,  
յեթե նույնիսկ թվա այն ձեզ միանգամայն  
աննշան բան: Մեր արհեստի մարդկանց համար  
ամեն մի մանրուք նշանակութիւն ունի:

Յես սկսեցի նկարագրել, նա գրում էր:  
Յերբ յես վերջացրի, նա ասաց.

— Այժմ լսեցե՛ք ինչ վոր յես գրեցի: Յերբ  
վորևէ սխալ նկատեք, ուղղեցե՛ք ինձ:

Նա կարգաց:

— Հասակը 19 վոտնաչափ, յերկարութիւնը՝  
գագաթից մինչև պոչը 26 վոտնաչափ, կնճիթի  
յերկարութիւնը՝ 16 վոտնաչափ, պոչի յերկա-  
կարութիւնը՝ 6 վոտնաչափ, ընդհանուր յեր-  
կարութիւնը, ներառյալ և կնճիթն ու պոչը՝  
48 վոտնաչափ, ժանիքների յերկարութիւնը՝  
9<sup>1</sup>/<sub>2</sub> վոտնաչափ, ականջների յերկարութիւնը՝  
համապատասխան հիշված չափերի, վոտքի հեա-  
քը նման է փոքրիկ տակառի հետքին ձյունի  
վրա, փղի գույնը՝ սպիտակավուն, ամեն մի  
ականջում ողբերի համար անցք՝ ափսեյի մե-  
ծության, սովորութիւն ունի ջուր թափել  
հանդիսատեսների վրա ու խփել կնճիթով վոչ  
միայն մերձավոր ծանոթների, այլ և միան-  
գամայն կողմնակի մարդկանց գլխին, մի քիչ  
կաղում է աջ վոտքի վրա, ձախ կոնատակին՝

մի փոքրիկ սպի այրվածքից մնացած: Կորած բոսիյին փղի վրա կար՝ պատգարակ տասնհինգ մարդու նստելու համար ու մեջքին ասեղնա- գործ ծածկոց՝ սենյակի միջակ գորգի մեծու- թյան:

Արձանագրության մեջ սխալներ չկային: Տեսուչը զանգահարեց, թույլի՛ր տվեց Ալարի- կին ու ասաց.

— Իսկույն տպել հիսուն հազար որինակ և ուղարկել բոլոր խուզարկու բաժանմունքներին ու մայր ցամաքի փոխատու դրամարկղներին:

Ալարիկը գնաց:

— Յե՛վ այսպես, առայժմ ամեն ինչ լավ է գնում: Այժմ յես կլինդրեյի ձեզնից կորածի լուսանկարը:

Յես տվի տեսչին լուսանկարը: Նա ուշա- դիր քննեց այն ամեն կողմից:

— Բարի՛, այս ել բավական է, քանի վոր չկա ավելի լավը, — ասաց նա: Ափսոս միայն, վոր այստեղ փղի կնճիթը ողակաձև կռացած է ու մտած բերանը: Չե՛ վոր միշտ այդ դրու- թյամբ չի պահում նա կնճիթը... Չլինի՛ այս մուրեցեցնի մեր խուզարկուներին...

Տեսուչը նորից սեղմեց զանգակի կոճակը:

— Ալարիկ, հրամայիր այսնկարից հիսուն

հազար սլատճեն հանել և առավոտը ուղարկել մեր բոլոր բաժանմունքներին, կցելով նաև փղի նկարագիրը:

Ալարիկը գնաց հրամանը կատարելու:

— Պեսք ե պարզև հայտարարել դողերը բռնողին: Ի՞նչքան կնշանակեք:

— Իսկ դուք ի՞նչ գումար խորհուրդ կառայիք:

— Յես կասեյի քսան հինգ հազար դրլար սկզբից: Չեր գործը բարդ է: Ինքներդ դատեցեք, գողերը հազարավոր յեղանակներ գիտեն թագնավելու ու հետքը կորցնելու: Նրանք ամեն տեղ բարեկամներ ու գործակիցներ ունեն...

— Ի՞նչպես: Մի՛թե դուք արդեն գիտեք, թե ովքեր են նրանք, — զարմացա յես:

Սակայն Բլենտի անշարժ դեմքը, վոր սովոր էր թագցնել իր մտքերն ու զգացմունքները, ինձ վոչինչ չասաց:

— Այդ մասին առայժմ չխոսենք, — հան- գիստ ու զանդող սլատասխանեց նա: Գուցե և գիտեմ, գուցե վոչ: Գողի բնավորության մա- սին մենք կարծիք ենք կազմում նրա աշխա- տանքի յեղանակից ու այն վորսի մեծությու- նից, վորի հետևից ընկնում է նա: Չեր դիպ- վածում մենք գործ ունենք վնչ մանր, գրպանա-

հատ գողի և վոչ ել սկսնակի հետ: Այս բանը  
զուր պետք ե լավ յուրացնեք: Յեվ ահա այս-  
պես, նկատի առնելով շրջագայության այն  
ծախքերը, վոր պիտի կատարեն մեր խուզար-  
կունները, նույնպես և գողերի ճարպիկությունն  
ու փորձառությունը, յես կարծում եմ, վոր  
քսան հինգ հազարը զեռ մի փորքիկ գումար  
ե: Այդպիսի գործի համար, սակայն, այնու-  
ամենայնիվ դրանով կարելի յե սկսել:

Մենք համաձայնեցինք այդ գումարով Հե-  
տո տեսուչը, վոր չեր խորշում վոչ մի ման-  
րամասնությունից, վորը կարող ե գործի մեջ  
ղեկավար թել հանդիսանալ, նորից զիմեց ինձ:

— Մենք զեպքեր գիտենք, յերբ խուզար-  
կունները գտել են գողերին՝ նկատի առնելով  
նրանց ախորժակի առանձնահատկությունները:  
Ասացեք խնդրեմ, ի՞նչ ե ուսում ձեր փիղը և  
շատ ե ուսում արդյոք:

— Ի՞նչ ե ուսում նա: Ամեն բան, ինչ  
կամենաք: Նա կարող ե ուսել մարդ, աստ-  
վածաշունչ<sup>1</sup>, բայց ախորժակով կիսիլտի նաև  
ամեն ինչ, վոր նման չի վոչ մարդու, վոչ ել  
աստվածաշնչի:

— Հրաշալի: Ձեր տեղեկությունները չա-

<sup>1</sup> Կրոնական մեծածավալ դիրք:

փազանց արժեքավոր են, սակայն բավականա-  
չափ վորոշ չեն: Մեզ հարկավոր են մանրամաս-  
նություններ: Մանրամասնություններ: Ահա  
թե ինչով ե պահպանվում, զեկավարվում մոր  
արհեստը: Յեվ այդպես, սկսենք մարդկանցից:  
Ասացեք, քանի՞ մարդ կարող ե ուսել ձեր փիղը  
մինստելում, — թարմ գրությամբ, իհարկե:

— Թարմ թե աղը դրած, — դա միևնույն  
ե նրա համար, խորություն չի դնում նա: Մի  
նախաճաշին նա կուտի... ասենք հինգ մարդ  
սովորական մեծության:

— Հրաշալի: Հինգ մարդ, այդպես ել զրենք:  
Իսկ ի՞նչ ազգություններ են նա գերադասում:

— Ազգության վրա նա ուշադրություն  
չի դարձնում: Ավելի շուտ նա ուսում ե ծա-  
նոթներին, բայց չի հրաժարվում նաև միանգա-  
մայն կողմնակի մարդկանցից:

— Լավ: Այժմ անցնենք աստվածաշունչնե-  
րին: Քանի՞ հատոր կարող ե ուսել մի նստելում:

— Թեկուզ մի ամբողջ հրատարակու-  
թյուն:

— Իա շատ անորոշ ե: Իսկ ինկատի  
ունեք սովորական հրատարակություն, թե  
պատկերագարդ — շքեղ:

— Պատկերագարդության վերաբերմամբ

նա միանգամայն անտարբեր ե: Նրա համար միևնույն է, թե ինչ կծամի՝ պատկեր թե տպագրված տառեր:

— Վնչ, դուք ինձ լավ չհասկացաք: Յես հետաքրքրվում եմ քաշով: Մովորական աստվածաշունչը քաշում է յերկու ֆունս ու կես, իսկ պատկերագարդվածը, հաստ թղթի վրա— վնչ պակաս տաս-տասներկու ֆունսից: Ի՞նչ քան այդպիսի աստվածաշունչներ կարող եք նա կուլ ալ մի անգամից:

— Ախ, յես տեսնում եմ դուք չեք ճանաչում այդ փղին: Նա կուտի վորքան կամենա և ինչպիսի աստվածաշունչ էլ լինի, միայն թե տվեք:

— Յեկեք վերածենք դա դոլլարների ու ցենտների: Կաշվի կազմով պատկերագարդ աստվածաշունչը վոսկի յեղրերով արժի հարյուր դոլլար:

— Յեվ ահա նրան հարկավոր կլինի այդպիսի հինգ հարյուր հատ — ուրիշ խոսքով՝ հիսուն հազար դոլլարի:

— Այ, այդ արդեն ավելի ճշգրիտ է: Յես այդպես էլ կնշեմ ինձ մոտ — հիսուն հազար դոլլարի: Լավ: Նշանակում է նա ուտում է մարդիկ ու աստվածաշունչներ: Այդ յես պար-

ղեցի: Ել ի՞նչ է ուտում նա: Ինձ հարկավոր են մանրամասնություններ:

— Հաճույքով ուտելով աստվածաշունչ, նա կարող է անցնել աղյուսների, աղյուսներն ուտելով— շիշերի, շիշերն ուտելով — մահուղե զգեստների, հետո կատունների, կատուններն ուտելով — վոստրենների, վոստրեններից — ապխտած մսի, հետո՝ շաքարի, շաքարից — կարկանդակի, կարկանդակից — կարտոֆիլի, կարտոֆիլից — թեփի, թեփից — խոտի, խոտից — հաճարի, հաճարից — բրնձի: Բրինձ նա ամենից շատ է սիրում, բրնձով էլ մեծացել է: Նա աշխարհում ինչ վոր կա կուտի, բացի յիվրոպական յուղից: Նա այդ էլ կուտեր, յեթե յուղի համից չզզվեր:

— Հրաշալի: Ի՞նչքան կերակուր է ուտում նա մի անգամից — մոտավոր թվերով:

— Մի քառորդից մինչև կես տոնն:

— Իսկ ի՞նչ է խմում նա:

— Ամեն ինչ, ինչ վոր կա հեղուկ վիճակում քնության մեջ: Կաթ, ջուր, վիսկի, կաստորկա, սկիպիդար, կարբոյան թթվուտ... թվին էլ չարժի, գրեցեք ուղղակի ամեն տեսակ հեղուկ, ինչ վոր մտքերովդ անցնի: Նա խմում է ամեն ինչ, բացի յեվրոպական սուրճից:

— Լավ: Ի՞նչքան ե խմում նա որական:  
— Հինգից մինչև տասնհինգ տակառ, նա-  
յած ծարավությանը:

— Այդպես: Ձեր աված բոլոր տեղեկու-  
թյունները շատ արժեքավոր են: Նրանք ան-  
շուշտ կոզնեն մեզ գտնելու հափշտակիչներին:  
Նա զանգահարեց:

— Ալարիկ, կանչիր կապիտան Բերնսին:

Բերնսը յեկավ: Տեսուչ Բլենարը բացառ-  
րեց նրան ամբողջ գործը բոլոր մանրագույն  
մանրամասնություններով: Հետո հրամայելու  
սովոր մարդու վճռական տոնով, մարդու, վոր  
գիտե, թե ինչ բանի յե ձեռնարկում, — նա  
ասաց:

— Կապիտան Բերնս, խուզարկու Ջոնսին,  
Դեվիսին, Հելսին, Բեյտսոլյին և Սակետին  
հանձնարարեք փղի հետապնդումը:

— Լսում եմ, տեր:

— Սուզարկու Մոգեսին, Դեկինին, Մեր-  
ֆին, Ռոջերսին, Տեպլերին, Սեգինսին և  
Բարթոլոմին — գողերի հետապնդումը:

— Լսում եմ, տեր:

— Հափշտակման վայրում գինված պահակ-  
ներ նշանակեք յերեսուն հոգուց, հերթափոխու-  
թյամբ: Կարգադրեցեք, վոր առանց իմ գրա-

վոր թույլտվության վաչվաքի չթողնեն այն-  
տեղ... բացի լրաբերներէից:

— Լսում եմ, տեր:

— Հասարակ քաղաքացու շորերով խու-  
զարկուներ ուղարկեցեք բոլոր յերկաթուղա-  
յին կայարանները, շոգենավային նավահան-  
դիսաները, լաստերի լաստակայանները, Ջերսի  
Միտիից դուրս յեկող բոլոր ճանապարհները:  
Հրամայեցեք նրանց խուզարկել բոլոր կտակա-  
ծելի մարդկանց:

— Լսում եմ, տեր:

— Նրանցից յուրաքանչյուրին ավեք փղի  
լուսանկարն ու նրա մանրամասն նկարագիրը:  
Կարգադրեցեք, վոր նրանք խուզարկեն դուրս  
յեկող բոլոր յերկաթուղային գնացքները, բո-  
լոր շոգենավերն ու բոլոր լաստանավերը:

— Լսում եմ, տեր:

— Յեթե բռնեն փղին, թող անմիջապես  
կալանավորեն ու հաղորդեն ինձ հեռախոսով:

— Լսում եմ, տեր:

— Հենց վոր գտնեն վորևե հետք՝ փղի  
վտարների տեղը կամ դրա նման մի բան, —  
թող այդ մասին ինձ անմիջապես խմաց  
տան:

— Լսում եմ, տեր:

— Թող նա վահանագետի բոլոր անդքերուն վեստիկանությունը հատուկ պահակներ դնի:

— Լսում եմ, տեր:

— Մայրայ խուզարկուներ ուղարկեցեք յերկաթուղու ուղղությամբ — դեպի հյուսիս մինչև Կանադայի սահմանները, դեպի արևմուտք — մինչև Ռիայոս, դեպի հարավ — մինչև Վաշինգտոն:

— Լսում եմ, տեր:

— Փորձված խուզարկուներ ուղարկեցեք հեռագրական բոլոր բաժանմունքները: Հրամայեցեք նրանց հետևել տրվող հեռագրներին: Թող պահանջեն, վոր թարգմանեն իրենց համար բոլոր ծածկագիր հեռագրերը:

— Լսում եմ, տեր:

— Յեվ միք մոռանա, վոր այս ամենը պետք է անել գաղտնի, ամենախոր ու անթափանց գաղտնապահությամբ:

— Լսում եմ, տեր:

— Ստացվող բոլոր տեղեկությունների մասին հաղորդեցեք ինձ սովորական ժամերին:

— Լսում եմ, տեր:

— Այժմ կարող եք գնալ:

— Լսում եմ, տեր:

Կապիտան Բերնսը գնաց: Տեսուչ Բլենսը

մի րոպե մնաց լուռ, խոր մաքերի մեջ ված: Նրա աչքերի կրակը մարեց: Վեր նա դարձավ դեպի ինձ ու ասաց.

— Յես չեմ պարծենա, — այդ իմ բնավորության մեջ չկա, բայց իմացեք, մենք կգրուենք փիղը:

Յես ամուր սեղմեցի տեսչի ձեռքն ու շնորհակալություն հայանեցի: Յեվ իսկապես, յերախտագիտական զգացմունք եյի տածում յես դեպի նա: Վորքան մոտիկ եյի ծանոթանում յես նրան, այնքան ավելի յեր նա դուր գալիս ինձ ու այնքան ավելի յեր ինձ ապշեցնում նրա զարմանալի արհեստի գաղտնիքներն ու հրաշքները:

Այնուհետև մենք բաժանվեցինք ու յես տուն դարձա ավելի հանգիստ սրտով, քան մինչև տեսչին այցելելը:

## II.

Հետևյալ որից գործիս մասին յես կարգացի առավոտյան բոլոր թերթերում:

Հափշտակությունը նկարագրված եր իր բոլոր մանրամասնություններով: Բացի այդ, լրագիրները բերում եյին հենց իրենց՝ խուզարկուների յենթադրությունները փոխ անհե-

տացման մասին: Կազմվել էյին արդեն մի քանի տեսություններ այն առթիվ, թե ովքեր են հափշտակիչները, ի՞նչ ձեվով ե կատարված հափշտակումը, ուր են թագնված գողերն իրենց ավարի հետ միասին: Այդպիսի տեսություններ կային ընդամենը տասնմեկ հատ և նրանց մեջ նախատեսված էյին բոլոր հնարավորությունները: Հենց միայն այդ ել ցույց ե տալիս, թե ի՞նչպիսի ինքնատիպ ու անկախ մտածողներ են մեր խուզարկուները: Տեսութուններից վնչ մեկը նման չեր մյուսին և միայն մի բանու՞մ բոլորը բացարձակապես համաձայն էյին իրար հետ: Նրանք բոլորը պընդում էյին, վոր թեև հետին պատն այն շենքի, ուր գտնվում եր փիղը, քանդված ե, սակայն փիղը տարել են վնչ թե այդտեղից, այլ վորևե այլ, դեռ չհայտնաբերված անցքից: Բոլորը համաձայն էյին այն բանում, վոր պատի քանդվածքը կատարված ե դիտմամբ, խուզարկուներին մոլորության մեջ գցելու համար: Խուզարկության գործին անիրագեկ մարդու մտքովն անգամ, իհարկե, չեր անցնի այդպիսի բան. բայց խուզարկուներին հեշտ չե մոլորեցնելը: Յեվ այդպես, յես վորպես անիրագեկ խուզարկության գործին,

սխալվում էյի հատկապես այն բանում, վորը համարում էյի ամենից պարզ հասկանալի: Բոլոր տամնմեկ հեղինակներն ել իրենց տեսությունների մեջ բերում էյին յենթադրվող գողերի անունները, և մի տեսության մեջ հիշատակված անուններն ամենևին չէյին համապատասխանում մյուս տեսության անուններին: Կասկածի տակ էյին առնում ընդամենը յերեսունյոթ հոգի: Տեսուչ Բլենտի կարծիքը, վորպես ամենահեղինակավորը, բոլոր թերթերը բերում էյին վերջում, վորպես յեզրափակումն: Ահա մի քանի հատվածներ նրանից.

«Տեսուչը քաջ գետե հանցագործներից յերկուսի անունը: Դրանք են՝ Դեֆֆին, «Աղյուս»: Փիղն անհետանալուց դեռ տասն որ առաջ տեսուչն արդեն գիտեր պատրաստվող հանցափորձի մասին ու հանգիստ միջոցներ եր ձեռք առնում հանցավորներին հետապնդելու համար: Բայց դժբախտաբար հենց հափշտակման գիշերը հետքերը կորցնում են ու մինչև նորից գտնելը — թոչնիկը (այսինքն փիղը) թոչում ե»:

«Դեֆֆին ու Մակ. Ֆեդդենը գողերից ամենահանդուգն են: Տեսուչը յենթադրում ե, վոր հենց նրանք էյին, վոր անցյալ տարի

ձմեռը, մի սառնամուսնիքային գիշեր խուզարկու բաժանմունքից գողացան վառարանը: Դեռ այն ժամանակ ինքը՝ տեսուչն ու խուզարկուները սառեցրին իրենց ականջներն ու վոտներին մատները ու դեռ լույսը չբացված վագեցին հիվանդանոց»...

Սկզբի մի քանի տողերը հագիվ եյի կարգացել, բայց արդեն ապշել եյի այդ արտասովոր մարդու մտքի խորաթափանցութեամբ: Վնչ միայն ներկան եր տեսնում նա ամբողջապես, այլ և կարողանում եր նախատեսել ապագան:

Յես շապեցի Բլենտի մոտ խուզարկու բաժանմունք, և հարցրի, թե՛ ել ինչո՞ւ չի հրամայել ժամանակին ձերբակալել այդ մարդկանց ու կանխել կորուստն ու նրա հետ կապված ցավերն ու հոգսերը: Սակայն նրա պատասխանը պարզ եր ու թույլ չեր տալիս վնչ մի առարկութեան:

— Մեր գործը հանցագործութեանները կանխելը չե, այլ հանցագործութեանների համար պատժելը: Իսկ քանի վոր հանցանքը չի կատարված, մենք չենք կարող պատժել:

Յես սիրտ արի նկատել տեսչին, վոր այն գաղտնապահութեանը, վորով պայմանավորվեցինք մենք թագցնել մեր գործողութեանները,

բացված ե թերթերի կողմից, վոր վնչ միայն մեր արած քայլերը, այլև ապագայի համար մեր կազմած բոլոր ծրագրերն ու յենթադրութեանները մերկացված են լայն հասարակութեան առաջ, վոր բոլոր կասկածելի անձնավորութեանների անունները հրապարակված են ու նրանք այժմ կարող են ժամանակին թագնվել կամ փոխել իրենց արտաքին տեսքը:

— Թո՛ղ, — ասաց տեսուչը: Յերբ յես զգամ, վոր հասել ե ժամանակը, իմ ձեռքի տակ կան բավարար միջոցներ, վոր կարողանամ բռն մեջ առնել նրանց, ուր ել թագնված լինեն: Իսկ լրագրները: — Մենք պետք ե հաշվի առնենք նրանց: Փառքը, հոչակը, մշտապես թերթերում հիշվելը — դա մեր հացն ե... Մենք պետք ե շարունակ ցույց տանք հասարակութեանը, վոր մենք վորևե բան անում ենք, այլապես նա կկարծի, թե մենք վոչինչ չենք անում: Ավելի լավ ե լրագրում տպվի հնարազետ միտք Բլենտի սրամիտ տեսութեան հաշվետվութեանը, քան վորևե չարախինդ ու անարգար ծաղր խուզարկուների հասցեյին:

— Այն այն, յես հասկանում եմ ձեզ: Սակայն մի յերկրորդական կետի վերաբերմամբ զուք գաղտնապահ մնացիք: Այդ առթիվ դուք

վոչվորքի հետ մտքերի փոխանակութիւնն չունեցաք:

— Այն, մենք միշտ այդպէս ենք անում: Այդ լավ տպավորութիւնն է թողնում: Ասեմ, վոր յես դեռ ինքս ել չգիտեմ, թե ինչ եմ մտածում այդ կետի մասին:

Յես հանձնեցի տեսչին բավական խոշոր մի գումար առաջիկա ծախքերի համար ու պատրաստվեցի սպասելու նորութիւններին: Ամեն բոլոր կարող եր տեղերից հեռագիր ստացվել: Պարապ միջոցիս յես մի անգամ ել կարդացի թերթերը:

Նրանց մեջ ասված եր, վոր քսանհինգ հազար դոլլար պարգևը նախատեսվում է միայն խուզարկուների համար և վոչ բոլոր քաղաքացիներին:

— Յես կարծում եյի պարգևն առաջարկվում է ամենքին, ով կգտնի փիղը, — ասացի յես տեսչին:

— Ամենին, — առարկեց նա: Միայն խուզարկուն կարող է գտնել փղին: Յեթե նրան գտնի ուրիշը, դա կլինի միայն շնորհիվ այն ցուցումների ու յենթադրութիւնների, վոր նա վերցրած կլինի խուզարկույից: Նշանակում է վերջին հաշվով դարձյալ խուզարկույին և

պատկանում պարգևն ստանալու իրավունքը: Պարգևը պետք է վոզեվորքի այն մարդկանց, վորոնք իրենց ամբողջ ժամանակն ու ընդունակութիւնները նվիրում են խուզարկութեան գործին և վոչ թե ծառայի վորպէս բարերարութիւնն պատահական մարդկանց:

Այդ ինձ համոզիչ թվաց: Յես հնազանդվեցի: Հենց այդ բոլորին սենյակի անկյունում տկտկաց հեռագրական ապարատը և հեռագրիչը ավեց մեզ հետեյալ հեռագիրը.

Յլատուկը Ստեյշեն, Նյու-Յորքի շտապ, 7,30 առ.

«Թեյը ճարել եմ: Գտնված են փղի վոտքի մի շարք խորը հետքեր այստեղի Ֆերմայի մոտ: Այդ հետքերով գնացի դեպի արևելք, բայց վոչինչ չգտա: Կարծում եմ փիղը գնացած կլինի դեպի արևմուտք: Շարունակում եմ հետապնդումը:

Խուզարկու՝ ԴԱՐԼԻ»

— Դարլին մեր լավագույն խուզարկուներից է: Շուտով նա մեզ կուզարկի լավ լուրեր:

Յեկավ յերկրորդ հեռագիրը.

Բարկերս, Նյու-Ջերսի, 7,40 առ.

«Հենց նոր հասա: Գիշերս այստեղ կողոպտեի են ապակու գործարանը, տարել են ութ հարյուր շիշ: Մերձակա ջրելատեղը գտնվում է հինգ մղոնի վրա, գնում եմ այնտեղ, հաշվի առնելով փղի ծարավը: Եշերը գատարի են յեղել:

Խուզարկու՝ ԲԵՅԿԵՐ»:

— Սա յեղ փոքր ապագա չի խոստանում — ասաց տեսուչը: — Հիշում եք, վոր յես առացի փղի ախորժակը կարող է մեզ ծառայել վորպես բանալի:

Յերրորդ հեռագիրը.

Տեյորվիլ 9,15 առ.

«Գիշերս այստեղ անհետացել է մի դեզ խոտ: Յերևի փիղն է կերել: Գտել եմ հետքը, գնում եմ առաջ:

Խուզարկու՝ ԽԱԲԲՈՐԴ»

— Ձեր այդ փիղը միանգամից հասնում է մի քանի տեղ, — ասաց տեսուչը: — Յես զիտեյի վոր հեշտ գործ չեմ ձեռնարկում: Բայց և այնպես մենք նրան կբռնենք, դուք հանգիստ յեղեք:

Ֆլաուեր Ստեյշեն, Նյու-Յորք, 9 առ.

«Հետքով յերեք մղոն գնացի դեպի արևմուտք: Հետքերը խորն են ու անհավասար: Պատմեցի ֆերմերին: Նա ասում է, թե դա փղի վտաքերի հետքեր չեն: Հավատացնում է, վոր այդ փոսերն ինքն է փորել, անցյալ ձմեռ մատղաջ ծառերը փոխադրելիս, ուրիշ տեղ արնկելու: Սպասում եմ կարգադրության առաջիկայի համար:

Խուզարկու ԳԱՐԼԻ»

— Ահա, գողերի գործակից, — ասաց տեսուչը: Գործն ընդարձակվում է:

Նա թելադրեց խուզարկույին պատասխան՝ «Ձերբակալեցեք ֆերմերին ու հարկադրեցեք գործակիցներին անուններն ասել: Փղի հետքով գնացեք առաջ, թեկուզ մինչև Մեծ ովկիանոսը, յեթե անհրաժեշտ համարվի այդ:

Տեսուչ՝ ԲԼԵՆՏ»

Ստացվեց դարձյալ մի հեռագիր.

Կոնի. Պոյինտ, 8,45 առ.

«Գիշերս կտարել են գազային գրասենյակը: Գողացված են յերեք ամսվա չվճարված հաշիվները: Գտել եմ հետքը, գնում եմ առաջ:

Խուզարկու ՄԵՐՖԻ»:

— Աստված իմ, — ասած տեսուչը: Միթե նա ուտում է և գազային հաշիվներ...

— Յեթե ուտում է, ապա սոսկ անփորձությունից է դա — բացատրեցի յես: Չե վոր դրանք շատ քիչ սննդարար են:

Վերջապես ստացվեց մի հեռագիր հուզող տեղեկություններով:

Այրոնվիլ, Նյու-Յորք, 9,30 առ.

«Հենց նոր հասա: Դյուզը հուզված է: Առավտովա ժամը հինգին փիղն անցել է այստեղով:

Վոմանք ասում են, թե նա գնացել է դեպի արևմուտք, մյուսներն ասում են արևելք, յերրորդները՝ հյուսիս, չորրորդները՝ հարավ: Բոլորն այնպես շտապել են փախչել, վոր չեն կարողացել լավ նայել: Ճանապարհին փիղը սպանել է մի ձի: Յես գտա դիակի մի մասն ու պահեցի հետագայի համար: Հարվածի բնութից դատելով, նա սպանել է ձիուն կնճիթով ու նշան է առել ձախ կողմից: Դիակի դիրքից յես յեզրակացրի, վոր փիղն ուղեվորվել է դեպի հյուսիս Բերկլեյի յերկաթուղու ուղղությամբ: Փիղն ինձնից առաջ է անցել չորսից մի քիչ ավելի ժամով, բայց յես հույս ունեմ հասնել նրան:

Խուզարկու՝ ԽԱՈՒԵՍ»:

Յես մինչև իսկ ճշացի ուրախությունից: Տեսուչը հանգիստ եր ու ինքնագոհ քարե կուռքի պես: Նա զանգահարեց:

— Ալարիկ, այստեղ ուղարկիր կապիտան Բերնսին:

Բերնսն յեկավ:

— Վորքան մարդ ունիք պատրաստ:

— Իննսուն վեց, տեր:

— Ուղարկեցեք նրանց հյուսիս: Թող խումբ խումբ տեղավորվեն Բերկլեյի յերկաթուղագծի ուղղությամբ, Այրոնվիլից հյուսիս:

— Լսում եմ, տեր:

— Կարգադրեցեք, վոր նրանք դուրս գան ու գործեն բացարձակապես գաղտնի: Հենց վոր ձեր մնացած մարդիկն ազատ կլինեն, պահեցեք նրանց իմ հետագա կարգադրությունների համար:

— Լսում եմ, տեր:

— Կարող եք գնալ:

— Լսում եմ, տեր:

Դրանից անմիջապես յետո ստացվեց դարձյալ մի հեռագիր:

Սեյջ Կորներս, Նյու-Յորք,  
10,30 առ.

«Հենց նոր հասա: Փիղն անցել է այստեղով

8 ժամ 15 րոպեյին: Քաղաքից փախել են բուրբը, բացի հերթապահ վոստիկանից, վոր զոնվել է իր պահակատեղում: Ըստ յերևույթին փիղը նշան է բռնել վոչ թե վոստիկանին, այլ լապտերի սյունին, բայց կպել է յերկուսին ել Դիակի մի մասը յես վերցրի, վորպես բանալի հետադայի համար:


Սուզարկու՝ ՍՏԱՄՄ՝

— Նշանակում է փիղը դարձել է զեպի արևմուտքը, — ասաց տեսուչը: Բայց նա չի կարող փախչել մեր ձեռքից, մեր գործակալները ցրված են վողջ շրջանում:

Դարձյալ մի հեռագիր.

Գլովեր. 11, 15 առ.

«Հենց նոր յեկա: Գյուղում գտա միայն ծերերին ու հիվանդներին: Այստեղից փիղն անցել է յերեք քառորդ ժամ առաջ: Այստեղ տներից մեկում ժուժկալուծթյան հակառակորդների ժողով է յեղել: Փիղը կնճիթը ներս է կախել պատուհանից ու մամնակիցների գլխին շուր թափել: Վոմանք մեռել են, վոմանք ել խեղդվել: Սուզարկու կրտսն ու ՌՇաուսեստին անցել են քաղաքով, բայց դարձել են զեպի հարավ և դրա համար ել աչքից բաց են



Թողել փղին: Վողջ շրջանը յերկյուղի մեջ ե:  
Նազաղ բնակիչները փախչում են: Նրանց ամեն  
ուղղությամբ հետապնդում ե փղին ու կոտո-  
բում տասնյակներով:

Նուզակու՝ ԲՐԱՆՏ՝

Յես այնպես վշտացա, վոր քիչ եր մնում  
լաց լինեյի: Բայց տեսուչը մխիթարեց ինձ:

— Տեսնում եք, մենք ուղիղ ճանապարհի վրա  
յենք: Նա զգում ե մեր մոտենալը, դրա համար  
եյ խույս ե տալիս դեպի հարավ:

Բայց ամենազարմանալի տեղեկություն-  
ները դեռ առաջն եյին: Այդ տեղեկություն-  
ներն եյ հեռագիրը բերեց մեզ:

Նոգանսորա, 12, 19

«Հենց նոր հասա: Փիղն անցել ե քաղաքով  
կես ժամ առաջ: Ընդհանուր յերկյուղ ու հու-  
զում: Կատաղել ե փողոցներում, հարձակվել  
յերկու շրկիրների վրա: Մեկն սպանված ե,  
մյուսն աղատվել ե փախուստի դիմելով: Քա-  
ղաքում սուգ ե:

Նուզարկու՝ Ո՛ՅԼԱՆԵՐՏԻ»:

— Այժմ փղն արդեն չորս կողմից շրջա-  
պատված ե իմ մարդկանցով, — ասաց տեսուչը:  
Այժմ արդեն վոչ մի բան չի կարող փրկել նրան:

Հեռագրերը թափվում եյին մեկը մյուսի  
յետեից: Նուզարկուները, ցրված մի քանի նա-  
հանգների տերիտորիայում, հետապնդում եյին  
փղին: Փիղն իր ճանապարհին թողնում եր  
քար ու քանդ գործարաններ, հացի շտեմա-  
րաններ:

Ցարերիկներ, գրադարաններ: Բռնելու հույսը  
զնալով աճում եր ու դառնում հաստատ համոզ-  
մունք:

— Ափսոս, — ասաց տեսուչը, — վոր չեմ  
կարող հաղորդակցություն ունենալ նրանց հետ,  
թե չե կհրամայեյի բոլորին զնալ դեպի հյուսիս:  
Բայց խուզարկույին բռնել չի լինի. նա վա-  
զում ե գրասենյակ հենց միայն նրա համար,  
վոր հեռագիր տա և շարունակում ե ճանա-  
պարհն ավելի հեռուն: Ի՞նչպես գտնես նրան:  
Ստացվեց դարձյալ մի հեռագիր.

Բրիջբորա, 12, 15

«Բարնումը տարեկան չորս հազար ե առա-  
ջարկում, վորպեսզի իրավունք ունենա փղից  
ոգտվելու՝ մինչև խուզարկուների կողմից բռնը-  
վելու ժամկետը: Նա կամենում ե կրկեսի աֆիշ-  
ներ փակցնել փղի վրա: Պահանջում ե անմի-  
ջապես պատասխանել:

Նուզարկու՝ ԲՈԳԻՍՍ»:

— Ի՞նչ ապուշ միտք ե, — բացականչեցի  
յես:

— Ի հարկե, — ասաց տեսուչը: Միտք Բար-  
նուժը կարծում ե ինքը ինձնից խելոք ե, բայց  
նա ինձ չի ճանաչում:

Յե՛վ նա թելադրեց պատասխանը.

«Չորս հազարի համաձայն չեմ: Յոթ հազար  
դուլար ե վո՛չ մի կոպեկ պակաս:

Տեսուչ ԲԼԷՆՏ»

— Այդպես Պատասխանի յերկար սպասելու  
կարիք չի լինի: Միտք Բարնուժը տեղը հան-  
գիստ նստել չի կարող, յերբ մի բան ե միտքն  
ընկնում: Հավատացնում եմ ձեզ, վոր նա այս  
րոպեյիս հեռագրատանն ե, Դեռ յերեք...

Համաձայն եմ, — ավին հեռագիրն, ընդ-  
հատելով տեսչին. — Պ. Բարնուժ:

Յես դեռ մի խոսք անգամ չեյի կարողա-  
ցել արտասանել աչքիս առաջ կատարվող գոր-  
ծառքի մասին, յերբ մի նոր հեռագիր ուշա-  
դրությունս զբավեց այլ կողմ:

Բոլիվիա, 12,50.

«Փիղը յեկել ե այստեղ հարավից ու անցել  
քաղաքի միջով 11,50-ին, ուղեվորվելով զեպի  
մերձակա անտառը: Ճանապարհին նա ցրել ե



Թաղման թափորն ու հանգուցյալին ուղեկցող-  
ները թիվը պակասացրել յերկու հոգով: Քաղա-  
քացիք փորձել են կրակել նրա վրա, բայց,  
հետո փախել են: Մենք խուզարկու Բերկի  
հետ յեկանք ճիշտ տաս ըոպե հետո:

Հեղեղից առաջացած մի շարք խորը փո-  
սեր սխարմամբ փղի հեռքերի տեղ ընդունելով,  
իզուր շատ ժամանակ կորցրինք: Վերջպես  
գտանք իսկական հետքն ու այդ հետքով գնա-  
ցինք մինչև անտառ: Անտառի ծայրից ձեռ-  
քերի վրա սողալով գնացինք, առանց հետքը  
կորցնելու, ու այդպես սողացինք մինչև անտա-  
ռի խորքը: Բերկը սողում եր առաջից: Մեր  
դժբախտությունից, փիղը կանգ եր առել շունչ  
քաշելու: Բերկն այնքան ցած եր կախել գլու-  
խը հեռքերի վրա, վոր չնկատեց այդ ու բոլոր  
թափով գլուխը խփեց փղի հետևի վոտքին:  
Իհարկե, դրանից հետո նա իսկույն վեր թռավ  
տեղից, բռնեց փղի պոչից ու բղավեց: «Յես  
պահանջում եմ պարզ... բայց հսկայական  
կնճիթի մի շարժումը տեղն ու տեղը սպանեց  
խեղճին: Յես հետ թռա, փիղն իմ հետևից:  
Անհավատալի արագությամբ նա հետևիցս ըն-  
կավ մինչև անտառի ծայրը: Նա ինձ ել կսպա-  
ներ, բայց բարեբախտաբար, անտառ գնալիս

ձանապարհին իր ցբած թաղման թափորի մնա-  
ցորդները նորից զբավեցին նրա ուշադրու-  
թյունը: Հետո յես իմացա, վոր թափորից մի  
մարդ անզամ կենդանի չի մնացել: Բայց զբա  
փոխարեն, նոր թաղման համար մեռելներ  
կային միանգամայն բավարար չափով: Փիղը  
մինչև այդ անհետացավ:

Խուզարկու ՄԵԼԻՌՈՒՆԻ»

Նյու-Ջերսի, Պենսիլվանիա, Դելավեր և  
Վիրջինի ցրված, ժրաջան աշխատող խուզարկու-  
ներից մենք ստացանք դարձյալ մի շարք զար-  
մանալի հաղորդագրություններ: Նրանք բոլորն  
ել գնում էյին փղի թարմ հեռքերով ու բոլորն  
ել հավատացած էյին, վոր շուտով կբռնեն  
փղին: Ժամի մոտ յերկուսին ստացվեց հետև-  
յալ հեռագիրը:

Բեկստեր— Սենտեր, 2, 15.

«Փիղն այցելեց քաղաք պոչից մինչև կնճի-  
թը ծածկված կրկեսի ափէջներով: Նա կիրակ-  
նորյա հավաքույթը ներխուժեց ու խեղանդամ  
գարձրեց հավաքույթի մասնակցողներից մի  
քանիսին, վորոնք պատրաստվում էյին լավա-  
գույն կյանք վարելու: Փղին բռնեցին ու վրան

պահակ նշանակեցին: Մենք խուզարկու Բրու-  
ուենի հետ անցանք ցանկապատն ու փորձեցինք  
լուսանկարի ու փղի նկարագրութեան ոգնու-  
թյամբ վորոշել նրա անձնավորութեանը: Բո-  
լոր նշանները համապատասխանում էին, բացի  
մեկից—կենտտակի սպիից: Բրաուենը սողաց փղի  
տակ, սպին վորոնելու, բայց հենց այդ միջո-  
ցին փիղը վայրկենապես ձղեց նրա գլուխը.  
հավանորեն ուղեղ եր վորոնում, բայց վոչինչ  
չգտավ այնտեղ: Բոլորը փախան, փախավ և  
փիղը, կնճիթի հաջող հարվածներով տապալելով  
իր մոտ կանգնածներին: Նրա վրա կրակեցին  
թնդանոթից ու ծանր վիրավորեցին, բայց  
հաջողվեց նրան թագնվել, արյան հետք թող-  
նելով: Հավատացած ենք, վոր շուտով կհաս-  
նենք փղին: Ուղեվորովեցի գեպի հարավ ան-  
տառի թփուտների միջով:

Խուզարկու ԲՐԵՆՏ):

Այս հեռագիրը վերջինն եր: Գիշերվա դեմ  
թանճր մառախուղ պատեց: Յերեք քայլի վրա  
վոչինչ չեր կարելի վորոշել: Նա չցրվեց վողջ  
գիշերը և գետերի լաստանավերն ու մինչև  
խակ հանրակառքերն ստիպված էին դադարեց-  
նել իրենց յերթեկութունը մինչև առավոտ:

Առավոտյան բոլոր լրագրերը դարձյալ լիքն  
էին ամենալավ խուզարկուների տեսութուն-  
ներով ու յենթադրութուններով: Փղի քաջա-  
գործութուններն ու մյուս անդեկոթուն-  
ները, վոր ստացվում էին հեռագրական թրդ-  
թակիցներից, հրապարակվում էին բոլոր ման-  
րամասնութուններով: Լրագիրների էջերը լիքն  
էին արշինանոց վերնագրերով, վորոնցից յու-  
րաքանչյուրը բռնում եր եջի մի յերրորդ  
մասը:

Իմ սիրտը պատուվում եր, յերբ կարդում  
էի դրանք:

«Սպիտակ փիղն ազատ: Ծակա-  
տագրական յերթը շարունակվում են:  
Գյուղերը դատարկվում են: Բնակիչները փախչում են: Սար-  
սափը փղի առջևից ե գնում, մահն  
ու ավերածութունը հետևից: Իսկ  
նրանց հետևից խուզարկուները:  
Հացի պահեստներն ավերված են,  
գործարանները — կործանված,  
ցանքսերը — վոչնչացված, տները  
— ամայացած: Արյունալի սպա-

ն ու թյուզնն երբ, վոր կատարում է նա իր ճանապարհին — աննկարագրելի յեն: Մեր ամենալավ խուզարկուհիները յերեսուհի ու չորս տեսու թյուզնն երբ: Տեսու չիլենտի իրա տեսու թյուզնը»:

— Ահա և նա — ասաց տեսու չիլենտը, նկատելի կերպով հուզված: Վերջապես ահա և նա: Ի՞նչ հրաշալի գովազդ է մեր խուզարկուհիների համար: Այսպիսի գովազդի դեռ չի արժանացել և վնչ մի նման կազմակերպություն: Մեր հոշակը կատարած վի վողջ աշխարհում ու կմնա հավիտյան: Յեվ իմ անուհն էլ նրա հետ:

Բայց յես հրձվելու արամազրություն չունեյի: Ինձ թվում էր, թե յես պատասխանատու յեմ բոլոր այն արյունալի հանցանքների համար, վոր կատարում է փիղը: Իսկ այդ հանցանքների ցանկն որեցոր պիլանում էր: Մի տեղ նա միջամտում էր քաղաքային ընտրություններին ու սպանում հինգ ընտրողների: Հետո սպանել է յերկու դժբախտների Մակ-Ֆլեննիդենին ու Ո'Դոնադույին, վորոնք դեռ մի որ եր, ինչ յեկել էյին մեր յերկիրն ու առնջին անգամ էյին ոգտվում ընտրություն-

ներին մասնակցելու իրավունքով: Հենց այդ րոպեյին նրանց վաչնչացնում է մեր այդ անխիղճ Սիամի Պատուհասը: Մի այլ քաղաքում նա հարձակվում է քարոզչի վրա, վոր պատրաստելիս է յեղել իր հերթական քարոզը թատրոնի, պարերի ու այլ զվարճությունների դեմ, ու արորում վտանների տակ: Մի ուրիշ տեղ նա սպանում է շանթարգելներ տարածող գործակալին: Այդպես մեծանում էր ցուցակը, ուռչում արյունից ու հանցանքներից: Սպանվածներն արդեն վաթսուն հոգի էյին, վիրավորները՝ յերկու հարյուր քառասուն:

Լրագրական բոլոր հաշվետվությունները նշում էյին խուզարկուհիների քաջությունն ու անձնվիրությունը: «Յերեք հարյուր հազար հասարակ քաղաքացիներ ու չորս խուզարկուհիներ յերես առ յերես ընդհարվել են սոսկալի արարածի հետ ու յերկուսը գոհվել են պաշտոնատեղում» — այդպես էյին վերջանում բոլոր հաղորդագրությունները:

Յես չափազանց վախենում էյի, թե չլինի հանկարծ հեռագրական ապարատն անկյունում նորից սկսի տկակալը: Յեվ իսկապես շուտով նորից սկսվեցին ստացվել տեղեկություններ, բայց բարեբախտաբար այս անգամ արդեն ու-

ըիշ տեսակի տեղեկություններ, վոչ այնպիսիք, ինչպիսիք յես եյի սպասում: Պարզվեց, վոր փիղը աչքից կորել է: Մառախուղի ժամանակ հաջողվել է նրան թագնվել և աչքից հեռու. մնալ: Ամենահեռավոր վայրերից, իրարից շատ ու շատ հեռու ընկած տեղերից հաղորդում եյին, վոր այսինչ ժամերին մառախուղի մեջ նկատվել է ինչ վոր մի անագին անորոշ գանգաված և վոր «անշուշտ դա փիղն է» յեղել: Այդպիսի «անորոշ գանգաված» նկատել են Նյու-Յեյքնում, Նյու-Չերսում, Պենսիլվանիայում, Նյու-Յորք քաղաքում: Բայց ամեն տեղ փիղն անմիջապես անհետացել է առանց վորևէ հետք թողնելու: Մեր անսահման յերկրի բոլոր կողմերը ցրված խուզարկու բաժանմունքի բազմաթիվ շոկատների յուրաքանչյուր խուզարկույից ժամը մի հաշվեալություն էր ստացվում իրենց հաջողությունների մասին, ամեն մեկն առանձնապես հաղորդում էր, վոր՝ թե՛ն արգեն ձեռքին է, հետևում է, հետապնդում, գնում «թարմ հետքերով», և վոչ վոք վոչինչ չեր գտնում:

Անցավ մի որ առանց վորևէ հետևանքի:

Անցավ յերկրորդը:

Անցավ յերրորդը:

Լրագրական հաշվեալությունները դարձան տաղտակալի, միակերպ, նրանք հաղորդում եյին փաստեր, վոր վոչ մի արժեք չունեյին, թելեր, վոր վոչ մի բանի չեյին հասցնում, տեսություններ, վոր այլևս վոչվոքի չեյին հուզում ու զարմացնում:

Տեսչի խորհրդով յես կրկնապատկեցի պարզելի գումարը: Անցան դարձյալ չորս տաղտակալի, վոչ մի բանով աչքի չընկնող օրեր: Վերջապես ծանր աշխատանքով ծանրաբեռնված խեղճ խուզարկուները խիստ հարված կրեցին: Լրագիրները խմբագրությունները հրաժարվեցին այլևս նրանցից տպագրության համար նյութեր ընդունելը:

— Բավական է ինչքան տպեցինք ձեր այդ տեսությունները, — սառը կերպով պատասխանեցին նրանց:

Յերկու շաբաթ անցավ փղի անհետանալուց: Պարզելի գումարը յես բարձրացրի մինչև յոթանասուն հինգ հազարի: Սա մեծ գումար է, բայց յես պատրաստ ելի տալ իմ անձնական բոլոր կարողությունս, վորպեսզի չկորցնեմ կառավարության վստահությունը: Այժմ, յերբ ամենքը հուսախաբվեցին խուզարկուներից, լրագրները նույնպես նրանց դեմ զարձան

ու սկսեցին ամենաանողոք կերպով ծաղրել ամեն քայլափոխում: Թաարոնների ղերասանները հագնում էին խուզարկույի շորեր ու բեմի վրա ներկայացնում փղի հետապնդումը: Յերգիծաբանական ամսագրերը ծաղրանկարներ էին տպում՝ խուզարկուն անազին հեռադիտակով դիտում է հեռուն, իսկ փիղը նրա հետևից, զրպանից խնձորներն է հանում:

Միայն մի մարդ կար համզօր ու անվրդով ու համառորեն տանում էր ամեն ծաղր ու ծանախ: Դա տեսուչ Բլենտն էր «կադնենի սիրտը»: Նրա պարզ ու պայծառ հայացքը փնջ մի անգամ չչփոթվեց, չտատանվեց:

— Թո՛ղ ծիծաղեն, — պնդում էր նա: — Լավ կծիծաղի նա, ով վերջը կծիծաղի:

Իմ հիացմունքս այդ մարդու վերաբերմամբ որ-որին ավելանում էր: Նա դառնում էր պաշտամունք: Յես որերով նստում էյի նրա առանձնասենյակում: Ավճաղ, խուզարկուների զրասենյակն այդ ծաղր ու ծանախի հետևանքով ավելի ու ավելի անհաճո վայր էր դառնում այնտեղ մնալու համար:

Բայց նա՛ իմ պաշտամունքի առարկան կարողանում էր տանել այդ, — նշանակում է յես էլ պիտի տանեյի, քանի ուժ ունեյի:

Փղի հափշտակումից անցել էր յերեք շաբաթ: Վերջապես մի առավոտ յես պատրաստ էյի արդեն խոնարհել դրոշս ու հեռանալ պարտըված: Բայց հենց այդ միջոցին մեծ խուզարկուն առաջարկեց ինձ դարձյալ մի ճարպիկ միջոց: Նա խորհուրդ տվեց կաշառել հենց իրենց՝ հափշտակիչներին: Իսկապես այդ մարդու հնարագիտությունը չափ ու սահման չուներ: Նա հավաստիացնում էր, վոր բավական է ծախսել հարյուր հազար դոլլար և փիղը կվերադարձնեն մեզ:

— Այդպիսի մի գումար թերևս յես դարձյալ կարողանամ հավաքել, — ասացի յես, — բայց ինչ կլինի խեղճ խուզարկուների զրությունը, վոր այդքան աշխատեցին պարզել հուսով:

— Նրանք կստանան կեսը, — հանգստացրեց ինձ տեսուչը:

Դրանից հետո յես չառարկեցի: Յե՛վ այդպես, Բլենտն հենց ինձ մոտ գրեց յերկու միատեսակ նամակներ հայտնի ավագանիների կանանց:

«Հարգելի քաղաքացուհի. Յեթե ձեր ամուսինը կամենում է ստանալ մի մեծ գումար, (առանց որևնքի կողմից վորևե պատժի յեն-

Թարկվելու), թող անմիջապես նշանակի որն ու ժամը ինձ հետ բանակցելու:

Տեսուչ՝ ԲԼԵՆՏ»

Հավատարմատարի միջոցով նամակներից մեկն ուղարկեց Դեֆֆի «Աղյուսի» կնոջը, իսկ մյուսը «Շեկոյի» Մակ-Ֆեդդենի կնոջը:

Ճիշտ մի ժամ հետո նրանցից ստացվեց վերավորական պատասխան — նամակներ:

«Հին ապուշ. Աղյուսը մեռել է յերկու տարի առաջ:

Բրեջեա ՄԵՆՈՆԻ»

«Հիմարների տեսուչ, Շեկո Մակ-Ֆեդդենը կախաղան է բարձրացված և արդեն տարի ու կես է, վոր յերկնքումն է: Այդ մասին զիտե ամեն մի ավանակ, բացի խուզարկուից:

Մերի ՌԵՈՒԼԻԳԱՆ»:

— Այդ առթիվ յես վաղուց կասկածում եյի, — ասաց տեսուչը: Այս նամակները միայն հաստատում են իմ բնազդի ճշտությունն ու անսխալ լինելը:

Հենց վոր տեսչի ձեռնարկած մի քայլը չեր հաջողվում, նա արդեն պատրաստ ուներ մյուսը: Նա իսկույն մի հայտարարություն գրեց

լրագրին: Ինձ մոտ մնացել է այդ հայտարարության պատճենը.

«Ա.-Կսիբլ. 242Ն. Ինդ.-Ֆց28լգ.Ոցպու, —; 2մ! ոգվ. Մուս»:

Նա ասաց, վոր յեթե ավագակը դեռ կենդանի յե, այսպիսի հայտարարությանը նա անմիջապես կարճագանքի ու կզա պայմանական վայրը: Գոյություն ուներ այդպիսի մըշտական վայր, ուր տեղի եյին ունենում տեսակցություններ հանցագործների ու խուզարկուների միջև:

Հանդիպումը տեղի պիտի ունենար հետևյալ որը, գիշերվա ժամը 12-ին: Մինչև այն ժամանակ վոչինչ չեր կարելի անել: Ոգտվելով այդ հանգամանքից, յես գրասենյակից գնացի մի փոքր հանգստանալու:

Հետևյալ յերեկոյան, ժամի 11-ին յես յեկա տեսչի մոտ ու սեզանի վրա դրի մի կապոց փող — հարյուր հազար դոլլար: Շուտով նա գնաց՝ դարձյալ նույն վստահության անհողորդդ արտահայտությունը աչքերին: Հետևյալ ժամն ինձ համար անտանելի յերկար տևեց: Վերջապես այդ ժամն ել մոտեցավ իր վախճանին: Յես լսեցի ինձ համար վաղուց ըղձալի քայլերի ձայնն ու շնչասպառ վեր թռչելով վագեցի նրան դիմա-

վորելու: Տեսչի պարզ աչքերը վառվում էին հաղթանակով:

— Ամեն ինչ սարքված է, — ասաց նա: Վաղն այդ ծաղրածուներն ուրիշ կերպ կերգեն: Յեկեք իմ հետեւից:

Տեսուչը վառեց մոմն ու ինձ տարավ ներքև, մի մեծ կիսանկուղային սենյակ, կամարածև առաստաղով: Այստեղ սովորաբար քնում էին բոլոր վաթսուն խուզարկուները: Այդ ժամին այնտեղ գտնվում էին տասներկու հոգի խուզարկու գործակալներից: Նրանք ձանձրույթից թուղթ էին խաղում: Մենք անցանք նրանց մոտով: Տեսուչը գնաց սենյակի ամենահեռավոր մութ անկյունը: Յես յետ չէյի մնում նրանից: Հանկարծ ինչ վոր մի սոսկալի հեղձուցիչ հոտ դիպավ ջթիս: Յես քիչ եր մնում կորցնեյի գլխակցությունս: Կիսախավարում գծագրվեց ինչ վոր մի տձև սպիտակ զանգված: Տեսուչը սայթաքեց ու, ընկնելով ուղղակի նրա վրա, ասաց.

— Կեցցե՛ մեր ազնիվ արհեստը: Փիղը գտնված է: Վերցրեք նրան...

Ինձ տարան վերև, զրասենյակը և ուշքի բերին կարբոլյան թթվուտով: Ներքևում նրստած բոլոր խուզարկուները վազեցին վեր ու



այդտեղ սկսվեց այնպիսի մի խրախճանք, վոր-  
պիսին յես կյանքումս չեյի տեսել: Կանչեցին  
բոլոր թերթերի լրագրողներին, մի ամբողջ արկղ  
շամպանսկի բաց արին, խմեցին, կենաց-  
ներ առաջարկեցին, մեկ-մեկու ձեռք սեղմեցին,  
շնորհավորեցին: Միանգամայն հասկանալի յե,  
վոր տեսուչ Բլենտը խրախճանքի հերոսն էր:  
Յես հաճույքով նայում եյի նրա վրա ու հաս-  
կանում, վոր նա արժանացել էր այդ բախտին  
իր համբերությամբ, խելքով ու քաջությամբ,  
բայց չե վոր յես զրկվել եյի ամեն ինչից: Յես  
դարձել եյի անտուն մի մուրացիկ, ինձ վստա-  
հած թանգազին կենդանին սատկեց, վստա-  
հությունը դեպի ինձ ու իմ պաշտոնը խախ-  
տվեց: Իսկ տեսչին հառել եյին տասնյակ  
հիացմունքով լի աչքեր, տասնյակ ձայներ շըն-  
ջում եյին, «Նայեցեք նրան, նայեցեք: Ահա  
խուզարկուների թագավորը, ահա իր գործն  
իմացող մի մարդ: Տվեք նրա ձեռք մի թել,  
մի աննշան թել — և այդ բավական է նրան:  
Նա կգտնի ինչ ուզեք, թեկուզ ծովի հատա-  
կում»:

Հիսուն հազար դոլլարի բաժանումը բո-  
լորին մեծ հաճույք պատճառեց: Յերբ վերջա-  
ցավ բաժանումը, տեսուչն էր բաժին փողը

զրպանը դնելով, արտասանեց մի փոքրիկ  
ձառ.

— Տղերք, ուրախացեք այդ փողն ստանալու  
համար և իմացեք, վոր դուք արժանի յեք, —  
ասաց նա: Դեռ ավելին, դուք անմահ փառքով  
ծածկեցիք խուզարկուների փողը դասը:

Հենց այդ ընդունին ստացվեց մի հեռագիր.

Մոնրո, Միչիգան, 10 ժ. առ:

«Յերեք շաբաթվա ընթացքում առաջին ան-  
գամ հասա հեռագրատուն: Ձիով փղի հետքե-  
րով ավելի քան հազար մղոն անցա անտառ-  
ներով: Որ-ավուր նրա վտաքերի հետքերը  
դառնում են ավելի շատ, ավելի պարզ ու ավե-  
լի թարմ: Հավատացած յեղեք, վոր մի շաբաթ  
չի անցնի և յես նրան կբռնեմ: Ճիշտ է ասածս,  
ինչպես մահը:

Խուզարկու ԴԱՐԼԻ»:

Տեսչի հրամանով ներկաները յերեք անգամ  
ուռա կանչեցին Դարլիի՝ «Ղոկատի ամենախելոք  
խուզարկույի» պատվին: Այնուհետև Բլենտը  
հրամայեց հեռագրել նրան, վոր նա վերադառ-  
նա տուն ու ստանա իր պարգևը:

Այդպես վերջացավ փղի հափշտակման զար-  
մանալի պատմությունը:

Հետևյալ առավոտ բոլոր լրագրերը նորից սկսեցին գովաբանել խուզարկուհիներին: Կար միայն մի փոքրիկ բացառութիւն: Մի գարշելի լրագրական թերթուկ համարձակվել էր տպել՝

«Այո, մեր խուզարկուհի մեծ մարդ է: Գուցե նա բավական դանդաղ է գտնում կորած փղի նման մանր իրերը, գուցե նա ընդունակ է յերեք շաբաթ շարունակ գիշերել հոտած դիակի հետ միասին մի հարկի տակ ու չնկատել, կասկած չտանել այդ մասին, սակայն յեթե մեկը նրա քիթը կոխի դիակի մեջ, նա այդ դիակը կզտնի, դա արդեն անկասկած է»:

Խեղճ Հասան (փիղը) կորով ինձ համար ընդմիջտ: Ահա թե ինչպես յեղավ այդ: Մահացու կերպով վիրավորված թնդանոթի հարվածներից, նա մոլորվել էր մառախուղի մեջ ու պատահաբար ընկել խուզարկու բաժանմունքի շենքը: Այստեղ նա շրջապատված թըշնամիներով, հյուծվելով քաղցից ու վերքերից, պռոկել էր ամբողջ յերեք շաբաթ, մինչև վոր մահը հանգիստ էր պարզակել նրան:

Գործառքը յերևակայական գողերի հետ ինձ վրա նստեց հարյուր հազար դոլլար: Իմ

մյուս ծախքերն այդ գործի վրա հասան մինչև քառասուն յերկու հազարի: Յես մնացի առանց միջոցների, յես կորցրի պաշտոնս, յես դարձա անտուն մի թափառական աշխարհում: Բայց իմ հիացմունքը խուզարկուհիների տեսուչ Բլենտի, աշխարհիս այդ ամենամեծ խուզարկույի վերաբերմամբ չնսեմացավ, ու չի նսեմանա յերբեք:



Պատ. խմբ. Ա. Հայրյան.

Տեխ. խմբ. Հ. Տեր-Իսախանյան

Հանձնված է արտադրության 13/1 1936 թ. Ստորագրված է  
ապրիլի 15/4 1936 թ. ՍՖ. ԱԾ — 105x148. Հրատ. № 3444  
Գլավիխտ 274. Փատվեր № 244. Տիրած 5000.

Тип. им. Стачки 1902 г. АЧКПТ Ростов-Дон

«Ազգային գրադարան»



NL0390167

1130